

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՍՅԷ


«Ա. Պ Տ Ա Կ»

Պուլ. Հր. Բոթեֆ 224—Սոֆիա

ԲԱԶՆԵՐԻՆ

հարկ, վեցամս.

Պուլկարիա 120 70 լեվա
Արտատպան 30 17 ֆր.



ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ԵՐԳԻՇԱԿԱՆ

„АБДАГЪ“

Бул. Хр. Ботевъ 224—София

„ABDAG“

Bld. Hristo Boteff 224

SOFIA (Bulg. rie)

ԳԻՆ 2 ԼԷՎԱ

Չհրատարակում ձեռագրերը եւ չեն դրվում

ԳԻՆ 2 ԼԷՎԱ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՆԱԽ ՍՏԻՊՈՂԱԿԱՆԸ...

Գաղափարներ կան որոնց գեղեցկությունը եւ բարենպաստականությունը անուրանալի է: Այս դասակարգին կը պատկանի նաեւ, Հայաստան կիսաաւարաբարբերքին շատագուժած «հրատարակչական»-ի մը գաղափարը:

Երկու բառով մեր ընթերցողներուն բացատրենք թէ ի՞նչ պիտի ըլլայ այդ «Հրատարակչական» նպատակը: Հայ գրականությունը ծանօթացնել Պուլկար ժողովուրդին եւ փոխադարձաբար, ու այդպէսով երկու ազգերու միջեւ գոյութիւն ունեցող բազմապիսի բարեկամական կապերը ամրապնդել եւ սեռակ մը մտային հաղորդակցութեան թել մը հաստատել:

Այս գաղափարը տեսականէն գործնական հողի վրայ փոխադրելու համար անհրաժեշտ է, եւ մեր յարգելի պատեմականիցը սկզբնական հայրին համար 50000 լեվա կը նախատեսէ՝ գումար մը զոր իրեն Ճիլիպէի հայութիւնը դիւրաւ կրնայ տրամադրել:

Արդարեւ ի՞նչ գեղեցիկ գաղափար եւ ի՞նչ վսեմ նպատակ. միջոցներ հայրայթել պուլկար ժողովուրդին որ հայուն հոգեկան ապրումները ունենայ, զգայ թէ ի՞նչ է տառապել հայր եւ թէ որքան անյարթելի դժուարութեանց դէմ սփռելով կրցեր է պահել իր գոյութիւնը դարերու ընթացքին, փոխադարձաբար մեր ժողովուրդը վերահասու ընել պուլկար ծագումի պատմութեան, պուլկար վիճի թռիչքներուն եւ պուլկար

հոգիի խորհուրդներուն, ու ըզգայնութիւններուն:

Բայց թող ներուի մեզ համեստէն պիտի տալ թէ հայ ազգը՝ որ այնքան խղճատառ ու միտաւոր է ահաւոր աղէտներու մահաափիւռ շունչէն, որ իր հազարաւոր անմեղունակ որբուկներուն հոգեւորը կը տառապի, որ իր անբաղդ ու ալեծածան գաղթական եղբայրներուն ցուազին աղերսանք կը լսւումն որ, որ իր իսկ գոյութիւնը օտար հորիզոններու տակ յուսալար փառ կուտայ՝ այդ ազգը կրնայ եւ միթէ պարսի պերճանքի կամ անտեղի փառամոլութեան գաղափարին հաճար հազարաւոր լեվաներ ծախել, երբ անոր մէկ յուման իսկ տակաւին իր արիւնքաբաւ վերքերուն պէտք է յոսկացուի:

«Հրատարակչական»-ի նման գաղափարներ գեղեցիկ են ու օգտակար երբ ձեռնարկուին պայմանները կը բոյաւորեն, երբ պարագաները աւելի նպաստաւոր են եւ դարմանուելիք ցոտեր գոյութիւն չունին: Բայց մեզի՝ Հայերու համար՝ շատ աւելի հրամայական պահանջներ կան, նախ պէտք է մեր ազագույն գոյութեան սպառնացող վտանգները անհետացնենք: Մասաղ սերունդը օտար տիներու վրայ կ'այլասերուի եւ մեր որբերն ու գաղթականները միջաժայռի ազդեցութեան տակ կը կորսնցնեն իրենց ազգին դրոշմը. պէտք է ժամ առաջ փութանք աղէտին առաջը տնկելու: Պատեմական գաղափարներ սրնուցանելու եւ ինքնագոյացութեան ասեղն չէ, չնմանիք այն հարսնետորներուն որոնք ուրիշին հագուստ կը հագնին եւ բանկարծէ՛ն նուէրներով կը պատուեն նորապսակ ամուր:

Մեր ստանդարտան որբերը ու գաղթականները հոգալու համար փոխանակ օտարներու դուռը ափ առնելով անոնց գոյքը հայցելու եւ սորոսութիւն մուտալու, լաւ կ'ընենք եթէ էլ մեր ազգային արժանապատիւնը բուժք բռնենք ու փառքի համար շուայրած գումարները էականին, անհրաժեշտ յոսկացնենք:

Վստահ ըլլանք թէ ո՛չ ոք մեզ կը մեղադրէ երբ մեր ետխարհագիտութիւնը շօտափելի կամ հրնչուն կերպով չենք ապացուցաներ, ամէն պիտութիւն՝ որու անմահներուն մէջ հայր կուտին՝ լաւ գիտէ թէ այդ ժողովուրդը ի վիճակի չէ ճնորհակալութեան ցոյցեր բնելու եւ անկէ մի միայն երկրին օրէնքներուն հնազանդութիւն կը պահանջէ: Արդ գիտնանք այդ օրէնքները յարգել ուր որ ալ ըլլանք եւ անպատեհ մեծամտութիւններէ տարուելով ծիծաղելի չ'դառնանք:

Ձեռն ուզեք ետվերձի յուսարձանին յիշատակութիւնը բնել այդ մասին շատ խոսուեցաւ արդէն: Բայց այս անգամ գոնէ լաւ հաշուենք երբ ուր չէ տակաւին ու չ'ստիպուինք կէս ետվելն եւ դառնալու: Մարտ 25ի Մարտիկին իր խմբագրականին նիւթ բնելով Լոնսոնաքնակ Տիկ. Իֆէօլէեանի երուսաղէմի վանքին քրած 10 հազար սթէրլինի նուիրատուութիւնը կ'ըսէ «... միթէ դատարարութեան պակաս է թէ զգացումը»:

Ահա խիստ պատշաճ որակում մը որ անհրաժեշտ իր բարեբար ազդեցութիւնը պիտի ունենայ «Հրատարակչական»-ի շատագուժութեան վրայ: Այո՛, գաղափարը գեղեցիկ է բայց, նախ ստիպողականը...:

ՓՈՔՐԻԿ ԼՈՒՐԵՐ

Կը լսեմք թէ Սօժիայի եւ Ռուս-նովի քաղաքականական ընտրութիւնները բեկանուած են պատկանեալ նախարարութեան կողմէ, եւ եռանդամ մը նշանակուած է ցնոր սնորհուրթիւն եկեղեցւոյ գործերը վարելու համար: Եռանդամին մաս կը կազմեն Պ. Պ. Մուրասով, Մելիքեան եւ Փափազեան: Այլ լայն ազգային լիսթայի մասնախումբին:

* Մարզիկ կան որ իրենց չը պատկանող իրերը պահելու մէջ հաճոյք մը կ'զգան, այս դասակարգին կը պատկանի նաեւ Թեմական Խորհուրդի նախկին քարտուրքը որ ով գիտէ ինչ խորախորհուրդ նպատակներու ծառայելով, կը յամառի տակաւին նոյն Խորհուրդին տաւրը իր հովը պահել: Թէրեւս փափաք անկէ կ'առնէ...:

* Յայտնի եւ սիրուած քառիսդ Պ. Ժօռտ կիրակի գիշեր երեկոյք նուագանդակ մը կազմակերպած է քաղաքականական ԿԱԶՄԵՆԻՆ մէջ, որ ներկայ պիտի գտնուի Սօժիայի Հայ-Լաւեր իր երեւոյթ միասին: Փութաքէ գոյ ալ անմասն չմնալ այս անգուցական հանդիպէն:

* Կարծեմ Ս. Զատիկը այն քան պիտի բարկանայ որ այս արի բնաւ չպիտի գայ: Իմեծ ցու Սօժիայի հայութեան տակաւին յայտնի չէ թէ Քրիստոսի Յաւորութիւնը երբ պիտի տօնուի: Ա. Գրիլ 12ին թէ 19ին:

Նոր Համլէթ մը պէտք է այս հարցը լուծելու համար:

* Կը լսեմք թէ կորսուած տարր նիւղերէն մին մինչեւ Վառնայ երկնցեր է: Աստուած շուտ ետ դարձնէ... Ամէն:

Երկրագործական երեսփոխաններէն Բէքֆօ Բէքֆոլի սպանութեանմբը մեղադրուած Քարթալաէճ, որ տակէ առաջ մահուան դատաւարտուած էր Սօժիայի նահանգային դատարանին կողմէ դիմած էր վերաքննութեան: Վերաքննիչ ասեանը տուաք որ հաստատեց մահուան վճիռը:

ԱԿԱՆՔ - ՏԵՍԱԿԱՆՔ - ՏԵՏԵՍԱԿԱՆՔ

- Ով պայքուցիկ մահաբեր ճիւղեր կը պարունակէ Ականք:
- Ով է մարդը բարի եւ ազնիւ ընողը Տեսականք:
- Ով անուշի ոմիրներ եւ մեծ քարիքներ կը գործէ Տեսականք:
- Ով անհաւիկ ամեցներ կը քանդէ Ականք:
- Ով մարդեր կարգի եւ շնորհի կը բերէ Տեսականք:
- Ով անմահ խառնակիչ աղջիկներ կը տէ Տեսականք:
- Ով հապարտուր մարդոց մահուան պատհանէ Ականք:
- Ով մէր մատաղ ւարունք կը դառնարակէ Տեսականք:
- Ով մարդակեայ մեքանիկներ եւ պէլայր զանանքեր յարգելի կընէ Տեսականք:
- Ով համեստապալ երեք գիր տիկնիկներ եւ կիսա-երեք գիր օրիւղներ ուրք երեսակներ կը ձեւացնէ Տեսականք:
- Ով է աշխարհիս չորս ծայրերէն հայ աղջիկներ Ամերիկա Բաւոյր Նիւթականք:

ՄՏՐԱԿ

ՔԻՉ ՄԸ ՔԱՏԵՐԱԿԱՆ

ԵԼՅԶ ԳՈՂԱՆ

Անդուդական արուեստագիտութիւն էլիզ Գովան, որուն խանձարուրը աչքերու առաջ ու իր մանկութեան օրերու անուշիկ յիշատակը տակաւին երեւակայութեան նրա մէջ վառ մնացած է, իր այժմեան բեմական յայտնանկովը այնքան արախաթիւն է արտիստը, որ հրճուած կը պատճառէ ինծի որ տկամայ կը տարւոյմ եւ ալ անոր հետ անոր փառքով հպարտանալու: Էլիզ Գովան մէկն է մեր արուեստագիտութիւնէն որ համբաւի, տաղանդի կատարելութեան ամենէն բարձր կէտին կը հասնի, արուեստ աշխարհին դիտակից դատակարարին մէջ: Իր վերադարձը Պոլիս եւ իրեն եղած փառասոր ընդունելութիւնը Հայ հանճարին յայտնանկն է: Հին եւ աղեղ բարքեր օրննիի աղջիկ զցոյց մակդիրներու դաւադոր անկում մը, եւ իսկական վսեմ ըզգացումներու վերակենդանացումը զէպի արուեստը եւ արուեստագէտը: Այս գերազանց իրողութիւնը Բեմի վաստակաւորներու արիւնը պիտի խանդավառէ, զլուրը բարձր ու սէգ պիտի արհամարհէ այնպիսիները որոնք տակաւին մոլթ աշխարհի մէջ կապրին:

ԷԼԻԶ ԳՈՂԱՆ, զոր Սօփիայիներուն շատերը չեն աւտած եւ չեն ճանչցած եւ առաջ վախճամ տեսնալու առիթն ալ չպիտի ունենան, էլիզ փոքր աղջիկն է ողբացեալ արուեստագէտ Ռուբէն Պիննէմէճեանի որ այս կոչումին բարձրութեանը դիտակից էր, շատ փոքր հասակէն թողուց որ էլիզին երազած փափաքը իրականանայ ու զայն առաջորդեց բեմ: Փոքրիկն էլիզ բեմի վրայ մեծցաւ, այն տեղ մեծցաւ նաեւ իր հանճարը եւ առաջանդը:

Վարպետը յաւա ողբացեալ Մընակեան կը գուրդուար եւ իր հօր ընկերները կը պաշտէին զինքը, բայց առաջ ինչպէս հայրը նոյնպէս անոր ընկերներէն շատերը չըտեսան եւ չփայլեցին իսկ մի քանի աղբորներ կը վախելեն եւ կապրին անոր փառքովը:

Եւ տակաւին ինչեր ինչ ունեցեր ինչ պարծանքներ, ինչ հռչակաւորներ որոնց մասին պիտի աշխատիմ գրել այս սխալներուն մէջ ծանօթացնելու Սօփիայի այն հասարակութեան, որոնք դադարաւոր չեն կազմած հայ արուեստագէտներուն վրայ: Մենք ալ ունեցած ենք՝ Ժան Հառիկներ, Սարաւեր, Ժիւլիաններ, Բեմաներ, ինչպէս նաեւ, Գօլլէն, Մունէ Սուլի, Սէար եւ Թէվրըներու գրեթէ հասարակող գերասան եւ գերասանութիւններ:

Էլիզ Գովան Թրանսայի ու Պէյ-ճիքայի մէջալ տարածեց իր համբաւը, ան հայ է եւ մերը...:

Էլիզ Գովան՝ շարունակութիւնն է Հայ արուեստագէտութիւնէն, որոնց անունը միայն յիշելով պիտի բաւականանամ՝ Արտսեակ, Հրաչեայ, Վ. Գարագաշեան, Աստղիկ Սիրանոյշ, Նուարդ, Հերանոյշ, Շամուանճեան, Գոհարիկ Շիրինեան, Արաքսի Շիրինեան, Հէքիմեան, Ազնիւ, Բնար Վ. Թէլէկեան, ինչպէս նաեւ Տիկին Սիրանոյշ Ալէքսանեան կինը անմահանալին Յ. Ալէքսանեանի որ հիմայ Բարիզ է, եւ տակաւին շատեր որոնք մէկ մէկ աստղեր էին հայ բեմին:

Շար. յայտնող թիւով

ԲԱՅՈՒԱՍԵ Է Ա. Պ. Տ. Ա. Կ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

ԱՒԵԼ ԱԳԱՊԻՆ ՏԵՐՏԸ

ԵՍՄԱԼԸ ԼՈՒՉԻՔ. — Քա կէօ-
րիւնմէջ հանրմ, առ օր խորապա-
թախները մտեր ես ամբաներէ պէ-
րի օրթան չիկաս,

Ա.Գ.ՊԻ. — Պարէ սուս էգիր քի
օրհնած պէրանս չի պանամ էյի
կիւն տօսթարըն: Նայէ օր մը է-
լար էկար հարցնելու քի ի՞նչ կը-
րակներու մէջ կը տապկուիս կոր
տէյի:

— Աման քուրուկ տուն ալ հիշ
տէրտայիլ պէլասըզ չի՞ պիտոր ըլ-
լուս:

— Ա՛խ քաշելիք ունիմ ան է,
քուրուկս:

— Նախէ նայիմ ի՞նչ է տէրտդ
պէլքի կարծը խելքովս ճար մըն
ալ ես կը կանամ:

Օ՛ֆ, էվլատն վար տէրտին վար,
ամա, էյէր թօռնըն վար ըսա՛ պէ-
լանըն փիւսկիւլիսի վար:

— Քա պարէմ կտոր մը փէրաէ-
սիդ խորթմէ քի՛ աշխար պան մը
հասկընամ:

— Խօրթաթին կարծը դուրձէմ,
թուս Արաքսիւն կը կարգուի կոր:

— Մեղա՛յ քի անիկա ալ տէր-
տիս պանը ըլլայ, անանկ է նէ աշ-
ուրնիդ լուս տէ, Աստված թամա-
մամին հասցունէ, իրարու խեր
տեսնան, մէկ բարձի վրայ ծերա-
նան տէ դուք ալ վրանին նայիք
ինգաք:

— Աղէկ ամա, ասիկա պաշխա
լէչիտ կարգուիլ մըն է քի, իմին
քուկին կարգուելուն չըլմանիր:

— Քա մ'ընէր, օգըդ պագնեմ,
աճապա մէկուն փէ՛յ տուած է:

— Կործին մէջ փէյ չիկայ ամա,
ընէվօլ իլէն քացաթուռա կը խա-
ղայ կոր:

— Էյ կը խենթեմ հիմա, տա
եղածը պաց խօրթմէ քի սիրտս չի
հասնի:

— Անանկ է նէ՛ կայնէ կործին
ծարէն նախիմ օր մեռաքէն աղա-
տիս:

— Աս շունչանորդի աղջիկը սէ-
պէ քի ծառքդ մենծցած է, աղէկ
կիտես օր, հոս տեղի ճիմածողի է,
կիմաղոնի է (կիմաղիա) աս
պուլլըրներուն մեծ տըլրատանէն
տիպլոման առնելէն ետքը երկու
տարի ալ կնաց աստեղի մեր վար-
ժարանին մէջ Վարժուհութիւն ը-
րաւ:

— Ապրիս աղջիկս ապրի՛ս:

— Տուն հիմա պանին սօնը մը-
տիկ ըրէ: Ըսեղնիքէն աս աղջիկը
ճղայինս օակի ելաւ ըսելով՝ սիւ-
սերը տալով սիրթիւք սիրթիւք
սօխախ՝ նետուելու հաւեսի մը ին-
կաւ:

— Քա քուրուք, աս ճղային ը-

տածնին ընտր պան է քի մերին
վրայ չիկայ:

— Իշտէ կէօյում մէռաքի պէս
խառախատա պան մըն է էղէր: Ը-
սեղնիքէն, տուն կուզես քի օրին
մէկն ալ հետը Պուլլըրի տելիխան-
լը զապիթ մը առնէ տուն պերէ:

ՊԱԼԵՏԻ ԳԱՌՆԻԿԻՆ ՆԱՄԱԿԸ

ԹԵՄԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԹԻՆ

Այս ինչ խայտառակ բաներ բաղեցի,
Թերթին կրածը միսէս չ'հանցի,
Սօճիայի մերին պզտիկ եկեղեցին,
Զիսեմ քէ որոնք զայն կողպեցին:

Է, աւօխուն Ձեզի խաչը չեմ կիսեր,
Ասի կարգալով ճանեցայ քէսեր,
Սառնց ըսածը մէկ մէկ չափեցի,
Հրուէս տղա պէս արցունք քափեցի:

Ճախաք ինչ պօս սեղ պօս խօսքեր ընեմ,
Ամէն նամբորդէն վիւա կը լսեմ,
Մ'վ որ պաշտօն առնէ այդ սեղը,
Դիւրը կը շտկէ չի ձգեր սեղը:

Գուրնազը եկաւ զնազ խրքումը,
Ինչպէս կրսէ մեր նին առածը,
«Կեղէն կիսէնի կըսեմ անքորը,
Եաղսան պալա բարմաք պաքորը:

Հիմա իմանքմ քեմական խորհուրդ,
Եթէ գոյութիւն ունիք ըրէք գուր խորհուրդ,
Ասանկ խրքում եւ գուրնազ մարդիկ,
Ինչ որ ալ ըլլայ կը ղեն կորիկ:

Միմակ գուր գործը տակէն լնեցէք,
Պէլքի պակասներ կան գուր նայեցէք,
Իդ, մօմ, ճապիկ ու ճալան ճիւղան,
Խնկարկուններուն լաւ խաշլըխ կ'ըլլան:

Տահա ճաւ պաներ Ձեզի պիտ գրեմ,
Որի որ դպիքմ քող ըլլայ վերեմ,
Բայց կը մտածեմ առածմ լոնեմ,
Միմէն որ անոր եախան ես բռնեմ:

Իմ վերջին խօսքս ասի քող ըլլայ,
Թաղականցուններ հարուս քող չ'ըլլայ,
Ընթեցէք մարդիկ կօշակար աւեմ,
Կամ քէ ինծի պէս վարպէս պալըխնի:

Հասկցաք հիմա ըսեմ քէ գիտեմ,
Դուք ալ եալընըզ մի բնէք կասակ,
Սահաք մը առաջ նայեցէք ճարը,
Եկեղեցոյ սեմէն տէք ըրէք չարը:

Այ երեւացէք անհոգ մի կայնիք,
Խոնարհ քէլէնիդ Պալըխնի Գառնիկ:

Ընդ. ՂԱՐԻՊ

— Է՛յ հիմա խելքիս կուգայ:
 — «Քա ազջիկ աս մարդը ով է»
 տէրի հարցուցի նէ,— «Ես եմ, աս
 մարդը քիմիկոս թօկրաֆին մէջր ին-
 ծի տեսեր, Պուլզըմա խորաթելս
 լսեր է տէ, իւրյա՛խ հաւներ է իլէ
 քի քեզի պիտոր առնեմ հարդ
 մարդ չէ՛ ըսեն նէ, իշտէ աս ըւէ-
 լովէնով անմէննիդ ալ էճէլսիդ կը
 հանեմ:

— Օտկըդ պագնեմ հիմա տամ-
 լաներու կուգամ:

— Ինչի կ'ուզես նէ եկուր, իշ-
 տէ պու պու տըր:

— Ըսէլ է քի հիմա ըլլա՞յ պը-
 տոր ատ պանը:

— Քա ինչո՞ւ լախրտը չես հաւ-
 կընար կոր, սէպէքի էղամ լմնցած
 պան է:

— Պարէ վեսացունիդ ինտո՞ր
 պան է:

— Հի՛շ ըսելիք չի կայ, տարիքը
 անճախ էստուն էստուն վերկուք
 կայ, ճերմկութիկ, խումաւի վը-
 րայ, պոյլու պոյլու, էլա աշուրնե-
 րով, ճիւղելի, խօսող խնդացող ա-
 մա, պագի Արաքոսիին հետ խօ-
 սած վախիթը պէրնէն տաճկէվար
 փիա լախրտըներ կը հանէ կոր,
 իշտէ տտոր չի հաւնեցայ:

— Քա դժուր ինչ է:

— Շէն, կրտէ, պօքու մույէ կը-
 սէ: ամա մէյէր իմ աւջին ֆրանք-
 սըզնա կը խօսաթէն էյէր կարծե-
 լով քի էս Պուլզըմա գիտէմ. մէկ-
 քը ատեր էմ էյէր, չիւնքի առնեք
 ֆ'անքսըզնա «սիրականրո», «փէք
 ապէք» ըսել է էյէր: Անկէց սօղրամ
 ալ տաւներնիս տեղերնիս հազար
 պաներով լեցուց, ս'ըր բսեմ, ս'ըր
 խօստովանիմ, հազար գլխի լա-
 խանայ, երտուն ախի բոստայ
 չուվայ մը չուչբա, տա ս'ըր մէկը
 թարիֆ ընէմ:

— Էս ալ կիտեմ քի իրաւոյնէ տէրա
 մը ունիա: Տնաչէն կնիկ, քեզի
 փիանքօ զարկէր է տէ՛ մէյ մըն
 ալ կայներ էս կըր գժկոհիա կոր:
 Աս ալ բսեմ. քի տա չուչբա է ինչ
 ետ մօւս ճախ է չուտես հա՛ սօրա
 տառնկ վեւայ արներու գ փիշման
 կըլլատ: Ա. Գ.

ԿԱՐԴԱՑԷՔ ԵՒ ՏԱՐԱԾԵՑԷՔ

«Ա Պ Տ Ա Կ»

ԿԱԿՈՍ ԱՂԲԱՐԸ

Կակոս աղբար X գիւղէն եկաւ,
 Շա՛ս աշխատեցաւ բայց չի գտաւ հաւ,
 Օր մընալ յանկարծ միտք մը յղացաւ,
 Բանուկ փողոց մէ... հունիկ մը բացաւ:
 Գիւղացիներն այս որ իմացան,
 Կասկածմիւր եղան բաննար կրեցան,
 Հեռուէն պոռած վա՛ս, կնամանաւ,
 Կակոս աղբարին մեծ բազմապատ:
 Մերին մարդուկը անհոգ անհարբէր,
 Կուսեր կը հագուներ գերդ միլիոնաւէր,
 Բաւական դրամ դիզեց հերիքը,
 Սապէս խորհեցաւ եկալ իր էլէքը:
 Կոր գումար մը պանգան դիզեցի,
 Ալ պէտք չուիմ անպատիւ հացի,
 Շա՛ս կը ցալիմ որ առաջ չսկսայ,
 Գիւղացիներն կանչեց այս հանդէսին մէջ:
 Բոլորն ալ եկան ուսելու էժի,
 Մանօք անմանօք էլքաւ դուրաժի,
 Անկնն ալ ճառեր խօսեցան,
 Փակման խօսքն ալ բաւ Կակոսեան:
 Ընկերներ բաւ երկու խօսք բսեմ,
 Ես վալը գիւղ պիտի համարեղեմ,
 Գիւղու վրայի կոստոնքս իմ,
 Ձեզի ձրգելաւ պատիւը ունիմ: :

Ս. ԻՋԱՐԵԼԵԱՆ

ԱՂՋԻԿՆԵՐԸ ՏՈՒՆԸ ՄՆԱՅԻՆ

Մեր տունը մնացած աղջիկները
 յոյս մը ունէին, ան ալ կորաւ:

— Ինչ ընենք, Ամերիկա հարս
 կ'երթանք, կ'ըտենք:

Ի՞նչէ այս խօսքը չառ քէ՛տով չէին
 ըսեր, այլ անձնատպանութեան ու-
 րշտ մը տուած յուսահատ մարդու
 մը շեշտովը, բայց վերջապէս յոյս
 սըն էր. և ինչ որ ալ ըլլայ՝ յոյսը
 յոյս է միշտ, հակառակ իտալա-
 կան առածին, ըստ որում: Յայտով
 ապրողը չիյնէմ ինչ ընելով կը
 մեռնի եղեր:

Սակայն հիւսն այդ յոյսն ալ չի
 կայ, քանի որ թերթերը կը գրեն
 թէ Ամերիկա մեկնողներուն թիւը
 լրացեր է այս տարուան համար,
 լուր մը, որ չոգենաի դօրմակալ-
 ներէ շտաբու սիրտին չամլա ի-
 ջեցուց...

— Ի՛նչ կ'ըլլայ, այս տարի չե-
 թան, գալ տարի հարս երթան,
 պիտի ըսէք:

Սակայն տարուան մը յօդուդու-
 մը գործին չի գար տունը մնացած
 աղջիկներուն, որոնք արդէն քօ-
 խումի երթալ սկսած են և տարի՛
 մը ևս սպասեցր տարի մը ծերա-
 նայ կը նշանակէ իրենց համար:

Հեռաւարդ կը խնդրենք Ամե-
 րիկայի բարեպաշտ կառավարու-
 թեանէն, որ բարեհաճի բացառու-
 թիւն մը ընել... մեր հարմեցու
 աղջիկներուն համար, որպէսպի
 տարի մը ևս տունը մնալու գա-
 տապարտու ելալ, յա իտեան տունը
 մնալու չգտապարտու ին:



Ս. Չատկի առթիւ «Ա Պ Տ Ա Կ»-ը
 լոյս պիտի տեսնէ 6 էջով:

Այս առթիւ ուշադրութիւնը կը
 հրաւիրենք բոլոր հայ վաճառա-
 կանաց, որ հաճին իրենց յայտա-
 րարութիւնները «Ա Պ Տ Ա Կ»-ին տալու:
 Յայտարարութիւնը կ'ընդուն-
 ուին հետեւեալ պայմաններով՝

5 ըզ էջի համար քվադրադ սան-
 դիմէթը 1.50 լէվա, իսկ մէկէ
 աւելի անդամներու համար 1 լէվա
 քվ. սանդիմէթը:

6-ըզ էջի համար 1 լէվա քվ.
 սանդիմէթը. մէկէ աւելի անդա-
 մներու համար 80 սանթիմ. քվ. սան-
 դիմէթը:

Փնտառութի համար 50 լէվա:
 Վճարումը կանխիկ:

Աղգային և կրթական հաստա-
 տութիւններու համար ձրի:

ՎԱՐՁՈՒԹԻՒՆ

Փ Ա Ս Տ Ա Բ Ա Ն
ՄԵՍՐՈՊ ՄՈՒՐԱՏՕՔ
 Ս Օ Ց Ի Ա
 Գրաւնեակ
 ԲՕՐԲԷԼԱԹԻՎԷՆ ԹԵՐԿՈՎԱՔԻ ՏՕՄ 6 ԵՒ 7
 Հեռ. անայն 2381
 Բնակարան ԳՈՂՈՑ ԲՈՋԻԹԱՆՈ 12
 Հեռ. անայն Տէպր 105

ՏՊԱՐԱՆ „ԱՐԱՐԱՏ“
 «ՅԱՐ ՍԻՄԵՐՆ» և «ՇՐԻՍԹ ՊՕԹԷՑ» 224
 Ս Օ Ց Ի Ա
 Կը տպագրուին մաքուր և
 չափաւոր գիններով ամէն տե-
 սակ գործեր՝ Հաւսանեկան
 հրաւիրագիր, Այցեւորնա, Նա-
 մակագլուխ, Պահաւան, Պա-
 տամուրհակ եւն.
 Ամէն լեզուէ
 ԳԻՒԼԵՑԷՔ ԳՈՂ ՊԻՏԻ ՄԵՆԱՔ
 ՅԱՆՁՆԱՐԱՐՈՒԹԻՒՆՔ Կ'ԸՆԴՈՒՆՈՒՆ
 ԿԱՆԽԱՎՃԱՐՈՎ

Отг. - Редакторъ: Арамъ Гурбетянъ
 Տպարան «ԱՐԱՐԱՏ» Հր. Պօթէժ 224—Սօֆիա